ՄԵԼԱՆՅԱ ԴԱՎԹՅԱՆ
Քաղաքական գիտությունների թեկնածու
ՀՀ Ոստիկանության կրթահամալիր
melania.davtyan@mail.ru

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ

Բանալի բառեր՝ *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Պրոկլես Դիադոքոս, նորպլատոնականություն, եռամիասնություն, ողբ, Հայոց մեծերի ծննդաբանություն*

Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն հայոցը» շուրջ 1400 տարի եղել է դասագիրք, օրինակ և չափանիշ՝ միջնադարյան հայ բոլոր պատմագիրների համար: Այն դուրս է եկել ազգային պատմության շրջանակներից և դարձել համաշխարհային պատմագիտական մտքի նշանավոր կոթողներից մեկը: Թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն, անգլերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն, հատվածաբար՝ նաև այլ լեզուներով: Խորենացու և նրա «Հայոց պատմության» վերաբերյալ լույս է տեսել շուրջ 3000 ուսումնասիրություն[1], որոնցում շոշափվել է գլխավորապես երեք հարց. 1-ին՝ պատմության գրության ժամանակի, 2-րդ՝ նրա արժանահավատության և 3-րդ՝ աղբյուրների խնդիրները[2]: Սակայն, հայտնի է, որ Ալեքսանդրիայում Խորենացին հմտացել է հունարեն լեզվին, սովորել է նաև «քերթողական, ճարտասանական և քերականական արվեստները»[3]: Ժամանակակիցները նրան հորջորջում են քերթողահայր: Նա սովորել է նաև «զզօրութիւնս պէսպէս իմաստից», որը նշանակում է, որ տիրապետել է տարբեր իմաստությունների զորությանը: Ժամանակակիցներից՝ Ղազար Փարպեցին Խորենացուն անվանում է «Երանելի փիլիսոփա Մովսես»[4]:

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Պ.,** Մովսես Խորենացու մատենագիտությունը, Ե., 1991: **Խաչատրյան Պ.,** Հայ հին գրականության մատենագիտություն, Ե., 2016, էջ 295–318:

[2] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն (այսուհետ՝ Մովսես Խորենացի), Ե., 1997, էջ 47:

[3] Տե՛ս **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 279:

[4] Տե՛ս **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 483:

Քանի որ այդ շրջանում քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը կազմում էին գիտությունների մի ամբողջություն, ուստի պետք է ընդունել, որ պատմական հիմք ունի նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի հաղորդումը, թե Գյուտ կաթողիկոսի ժամանակ «էր մեծ փիլիսոփոսն Հայոց Մովսէս, որ զճարտասանականն արվեստ ի գործ առնու ի հայս»[5]: Պես-պես «իմաստների»՝ գիտությունների մեջ առաջին տեղը բռնում էր հունական իմաստասիրությունը: «Հայոց պատմության» հենց սկզբում Խորենացին իր մեկենաս Սահակ Բագրատունուն հղած թղթում պարզորոշ խոստովանում է. «…ես չեմ տատանվում՝ ամբողջ Հունաստանը գիտության մայր կամ դայակ կոչել:

Եվ այսքանը բավական է բացատրելու համար Հունաց պատմագիրներին դիմելու մեր կարիքը»[6]:

Մի այլ առիթով, Ալեքսանդրիայի իր ուսուցչին գովելով, առանց անունը տալու նրան անվանում է «Նոր Պղատոն». «Այժմ այս քաղաքում (Ալեքսանդրիայում Մ. Դ.), …սովորում են պես-պես գիտություններ Նոր Պղատոնից, իմ ուսուցչից, որին անարժան աշակերտ չհանդիսացա և ոչ էլ արվեստ ձեռք բերի անկատար կերպով, թերի ուսումով»[7]:

Ինչպես տեսնում ենք, Խորենացին իր ուսուցչի համար պատահական և անարժան աշակերտ չի եղել: Թեև հայ պատմագիրներից Ղ. Փարպեցին և Ասողիկը Խորենացուն ճանաչում են որպես նշանավոր փիլիսոփա, իսկ հեղինակն ինքն իրեն համարում է հունական մշակույթի երկրպագու, նորպլատոնական ուսուցչի աշակերտ, այսինքն նորպլատոնականության փիլիսոփայական ուղղության հետևորդ, այնուամենայնիվ, Խորենացուն նվիրված ուսումնասիրություններում նրա փիլիսոփայական հայացքները գրեթե չեն քննարկվում ու մեկնաբանվում: Մինչդեռ Խորենացու հիշատակած «Նոր Պղատոն» ուսուցիչ ունենալու փաստը հուշում է, որ նրան պետք է ուսումնասիրել փիլիսոփայության այն մեծ դաշտում, ինչպիսին նորպլատոնականությունն է:

Հայտնի է, որ նորպլատոնականությունը անցումային շրջանի փիլիսոփայություն էր, անտիկ փիլիսոփայությունից՝ բազմաստվածապաշտական մտածողությունից, անցումն էր մոնիստական՝ միաստվածապաշտական մտածողության: Նորպլատոնական փիլիսոփայությունը պլատոնականությունն էր,

---

[5] Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ, Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 79:

[6] **Մովսես Խորենացի,** էջ 70:

[7] Նույն տեղում, էջ 268:

որը վերաձևավորվել էր III դարում, երբ աստիճանաբար քրիստոնեական գաղափարախոսությունը տարածվում էր հռոմեական կայսրությունում: Այս ուղղության հիմնադիրը Պլոտինիոսն էր: Այն որպես պլատոնականության վերածնունդ, Պլատոնից 600 տարի հետո վերականգնվում է Պլոտինիոսի /205-270/ կողմից: Հայտնի է նաև, որ 244 թ. նա տեղափոխվում է Հռոմ և հիմնադրում իր փիլիսոփայական դպրոցը: Նրա մահվանից հետո, բացի հռոմեական նշված դպրոցից, նմանատիպ դպրոցներ են հիմնադրվում Սիրիայում, Պերգամում, Աթենքում և Ալեքսանդրիայում: Հենց այստեղ էլ կրթություն են ստացել Մովսես Խորենացին և Դավիթ Անհաղթը:

Նորպլատոնականության առաջին փուլում (II—III դդ.) այս ուսմունքը իր սպեկուլյատիվ՝ վերացական-տեսական բնույթով, հիմնականում կառուցված էր Պլատոնի տրիադայի՝ «միասնական-ամբողջի», «մտքի» և «հոգու» միասնության ուսմունքի հիման վրա, որի հայտնի ներկայացուցիչներն էին Պլոտինիոսը և Պորփյուրը:

Նորպլատոնականության զարգացման երկրորդ փուլը (III—IV դդ.) աստվածաբանական շրջանն է, որտեղ փորձ է արվում միացնել բոլոր հին հավատալիքները: Չհեռանալով սպեկուլյատիվ տեսական հողից, այդ փուլի նորպլատոնականությունը գլխավոր շեշտը դնում էր կիրառական միստիկայի, թեուրգիայի և մանտիկայի վրա, համակարգում անտիկ դիցաբանությունը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով կրոնական-մոգական պրակտիկայի վրա, բացատրում էր մարգարեությունների ու հրաշագործությունների, կախարդությունների, գուշակությունների, առեղծվածների, աստվածաբանության էությունն ու մեթոդները, վերզգայական աշխարհի պատկառելի բարձունքը: Այս փուլին է պատկանում նորպլատոնական սիրիական դպրոցը: Այն հիմնել է Յամբլիքոսը՝ Պորփյուրի աշակերտը: Բացի տեսական աշխատանքներից, կարևոր նշանակություն էր տրվում սուրբ տեքստերի մեկնաբանությանը և կրոնական պրակտիկային, որոնք բացատրվում էին որպես թեուրգիա՝ արարչագործություն (հուն. theurgia-theos աստված և ergon-գործ):

Նորպլատոնականության երրորդ փուլը (IV–VI դդ.) սխոլաստիկական մեկնաբանությունների շրջանն է, անտիկ փիլիսոփայական ուսմունքների համակարգման և վերականգման փորձաշրջանը: Այս փուլի հետևորդներն էին Աթենական և Ալեքսանդրյան դպրոցները[8]:

[8] Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/неоплатонизм

Նորպլատոնական ուսմունքին բնորոշ է աշխարհի **աստիճանակարգված կառուցվածքը**, որը ծնվել է այնկողմնային սկզբնաղբյուրից, որը հոգու «վերածննդի» մասին ուսմունքն է և Աստծու հետ միանալու գործնական ուղիների մասին դրույթը, որ հիմնված էր խորհրդապաշտության հետ կապված կայուն հետաքրքրության, պյութագորյան թվերի խորհրդանիշների և հեթանոսության վրա[9]:

Նորպլատոնականությունը, որպես անտիկ փիլիսոփայությունը միջնադարյան փիլիսոփայությանը կամրջող ուսմունք, խնդիր էր դրել անտիկ մտածողությունը փոխակերպել վաղ միջնադարյանով: Անտիկ նորպլատոնականությունը միջնադարյան փիլիսոփայության մեջ զգալիորեն ձևափոխվեց՝ «Միասնական–Բարիքը» փոխարինվեց «Աստծով» և դրան համապատասխան նոր բովանդակություն ստացան «Համաշխարհային բանականությունը», որը փոխարինվեց Քրիստոսով, «Համաշխարհային հոգին»՝ Սուրբ հոգով և Տիեզերքը՝ ամբողջ նյութական բնությամբ: Անտիկ աշխարհայացքում տիրապետում էին ունիվերսալիզմը՝ տիեզերակենտրոնությունը և բազմաստվածությունը, միջին դարերում՝ աստվածակենտրոնությունն ու միաստվածությունը[10]:

Նորպլատոնականությունը մուտք էր գործում ամենուրեք՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտները, առավել ևս քաղաքական ոլորտ և հետապնդում քաղաքական կոնկրետ նպատակներ: Միաստվածաբանական, քրիստոնեական նորպլատոնական համակարգում ամրագրվելը հայ առաջավոր մտածողների համար ևս դարձել էր *ժամանակի պահանջ:*

Իսկ ի՞նչ նպատակ ուներ նորպլատոնականությանը հետևելը, ազգային ի՞նչ կենսական պահանջների համար էր, կամ քաղաքական ի՞նչ նպատակներ էր հետապնդում Խորենացին:

Խորենացին առաջինը եղավ, որ գրեց հայ ժողովրդի համակարգված պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները: Խորենացին նաև հայ առաջին պատմագիրն է, ով պատմագրական իր երկի հիմքում դրել է պատմափիլիսոփայական հստակ ու սահմանազատված հայեցակարգ, որով նա դուրս է գալիս շարքային պատմագրի շրջանակներից և թևակոխում փիլիսոփայության բազմաշերտ բնագավառ: Այսուհանդերձ, նա չի զբաղվել տեսական-փիլիսոփայական հիմնախնդիրներով: Նա գործնական, կիրառական փիլիսոփա-

[9] http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/filosofiya/NEOPLATONIZM.html

[10] Տե՛ս **Կանկե Վ.,** Փիլիսոփայություն, Ե., 2001, էջ 66:

յության կրողն է: Նրա նպատակն էր բացահայտել մարդու, և հատկապես քաղաքական գործչի ճշմարիտ վարքը, հոգեկան կատարելության և առաքինության տանող ճանապարհները:

Հայտնի է, որ պատմական իրադարձությունների հաջորդական գրառման անհրաժեշտությունը ծագել է հնագույն ժամանակներից: Շարադրանքները հայտնի էին «տարեգրություն», «ժամանականագրություն» անուններով, որոնցում պատմական իրադարձությունները ներկայացվում էին առանց փոխադարձ կապի ու քննության, առանց ամբողջացնելու, ընդհանրացնելու կամ մեկնաբանող վերաբերմունքի: Խորենացու «Հայոց պատմությունը» պատմական դեպքերի ու փաստերի նկատմամբ քննական վերաբերմունք ցուցաբերելու, պատմական հասկացություններ ստեղծելու առաջին վճռական քայլն էր, պատմական բազմաբովանդակ դեպքերի մեկնաբանությունը և անցյալի իմաստավորումը: Հավանաբար նման որակների պատճառով է Թուկիդիտեսի սահմանումը՝ «Պատմությունը փիլիսոփայությունն է օրինակներով»:

Պատմության փիլիսոփայությունը հասկանալու համար պետք է զուգահեռներ անցկացնել այն փիլիսոփայական համակարգի հետ, համաձայն որի, գրվել է տվյալ երկը: Հետազոտությունները ցույց տվեցին, որ Խորենացու պատմագրությունը համեմատելի է իր ժամանակակից, Ալեքսանդրիայում ուսումն առած, նորպլատոնականության ներկայացուցիչ, հույն փիլիսոփա Պրոկլես Դիադոքոսի (410–485) փիլիսոփայության հետ:

Պրոկլեսը Աթենքում աշակերտել է Պլուտարքոսին և Սիրիանոսին, որոնց մահվանից հետո ստանձնել է Պլատոնյան Ակադեմիայի ղեկավարությունը: Գրել է փիլիսոփայական և մաթեմատիկական աշխատություններ, որոնց մեծ մասը Պլատոնի, ինչպես նաև Արիստոտելի ու Եվկլիդեսի երկերի մեկնությունն է: Պրոկլեսը փորձել է համակարգել նորպլատոնականությունը, մասնավորապես, Պլոտինիոսի ուսմունքը՝ կիրառելով եռամիասնության վերլուծության մեթոդը: Մեծ է Պրոկլեսի փիլիսոփայական ժառանգության նշանակությունը տրամաբանության և դիալեկտիկական մտածողության պատմության համար[11]:

Նա ձգտում էր մեկ միասնական փիլիսոփայական համակարգի մեջ տեղավորել անտիկ դիցաբանության բովանդակությունը, որի համար պատմա-փիլիսոփայական գրականության մեջ բնութագրվել է որպես հեթանոսության

[11] Հայկական Սովետական Հանրագիտարան, Ե., 1983, հ. 9, էջ 440:

համակարգող: *Պրոկլեսը ընդունում էր գոյություն ունեցող ամեն ինչի զարգացման երեք աստիճան:*

Նրա մշակած համակարգում առավել յուրահատուկ ձևով հանդես է գալիս եռամիասնության դիալեկտիկական զարգացման օրենքը: Ըստ այդ օրենքի, մեզ շրջապատող գոյերը ծնվել են նախաստեղծից, և անցել երեք հիմնական փուլերով.

Առաջին փուլում ստեղծվողը ընդգրկվում է ստեղծվածների միասնության մեջ,

երկրորդում՝ նոր ստեղծվածը գործում է որպես իրականություն, իսկ

երրորդում՝ ստեղծվածը նվազելով իր կենսունակության մեջ, վերադառնում է իր նախասկզբին: Պրոկլեսն իր եռափուլ զարգացման օրենքը հայտարարում է կենդանի իրականության օրենք[12]:

Պրոկլեսի եռամիասնության մեթոդի խորենացիական կիրառման դասական օրինակը, թերևս, հայոց պատմության հանրահայտ պարբերացումն է:

Հիմք ընդունելով ժամանակի գործոնը, Խորենացին «Հայոց պատմությունը» բաժանել է երեք շրջանների. «Ծննդաբանություն», «Միջակ պատմություն», և «Ավարտաբանություն»: Առաջին գիրքը՝ «Հայոց մեծերի ծննդաբանությունը», ընդգրկում է բաբելոնյան աշտարակաշինությունից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետության հաստատումը: Երկրորդ գիրքը՝ «Միջին պատմություն մեր նախնիների» ընդգրկում է Ալեքսանդր Մակեդոնացուց մինչև Տրդատ Գ-ի մահը կամ քրիստոնեության պետական կրոնի ընդունումը: Երրորդ գիրքը՝ «Մեր հայրենիքի պատմության ավարտը» Տրդատ Գ-ի մահից մինչև Արշակունյաց պետականության անկումը՝ 428 թ.: Այս պարբերացման հիմքում Խորենացին դնում է հայոց և համաշխարհային պատմության այնպիսի առանցքային ելակետեր, ինչպիսիք են հայ ժողովրդի ծագման, պարսկական աշխարհակալության տապալման և հելլենիզմի ստեղծման, քրիստոնեության պետական կրոն ճանաչման և հայոց պետականության անկման շրջադարձային իրողությունները: Այնքան հստակ է այս պարբերացումը, որ մինչև հիմա էլ գրեթե անփոփոխ ընկած է հայոց պատմության պարբերացման հիմքում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն պատմական գիտելիքի միասնական համակարգ է, տրամաբանական, հստակ ու միասնական պատ-

[12] Տե՛ս **Старокадомский М.А.** Неоплатонизм и христианство, М., 1974, с. 212.

մության շարադրանք, որոնք բխում են համագիտական նյութերից ու աշխարհայացքային սկզբունքներից:

Այժմ տեսնենք, թե բացի ժամանակագրական այս ելակետային դրույթներից, իմաստասիրական ինչ սկզբունքներ ու մեթոդներ է կիրառել Խորենացին իր պարբերացման մեջ:

Խորենացու պատմագրությունը համապատասխանում է պրոկլեսյան դիալեկտիկական զարգացման եռյակի օրենքին՝ իր գիտականությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ.

1) Առաջին փուլում՝ «Հայոց մեծերի ծննդաբանությունը» գրքում, նա համեմատում է մեր ազգի ճյուղագրությունը Եբրայեցոց, Քաղդեացոց ճյուղագրությունների հետ, մեր թագավորների ցուցակը՝ մարաց թագավորների ցանկի հետ: Սա կենդանի իրականության «եռամիասնության օրենքում» առաջին փուլն է: Այսինքն, Խորենացու կողմից ստեղծվող հայոց թագավորների ճյուղագրությունն ընկած է ստեղծված՝ այսինքն, եղած թագավորների միասնության մեջ:

2) Երկրորդ փուլում՝ «Հայոց միջին պատմություն» հատվածում, Խորենացին ներկայացնում է պատմական անցուդարձը, թագավորների գործողությունները, որպես փաստ՝ տարածության ու ժամանակի մեջ արձանագրված հավաստի իրադարձություններ:

3) Երրորդ փուլում՝ հայոց մեծերը, հայ ժողովուրդը, ծնված լինելով Նախասկզբից, աստիճանաբար նվազում են կենսագործունեության մեջ, հասնելով մինչև ավարտ՝ «վրդովված խաղաղության, խախտված ուղղափառության, տգիտությամբ հիմնավորված չարափառության»[13] և հանգելով ողբալի իրավիճակի:

Հայ գրականության մեջ հայտնի են ամենատարբեր դարաշրջաններում, ամենատարբեր հեղինակների կողմից գրված «Ողբեր»: Հնագույն օրինակը Հին կտակարանի «Ողբ սրբոյն Երեմեա մարգարէի» հատվածն է:

«Ողբը» թեմատիկ առումով լայն ընդգրկում ունի. արտացոլում է կյանքի այնպիսի իրողություններ ու դեպքեր, որոնք եղերական բնույթ ունեն: «Ողբերում» իրար են հակադրվում «երանելի» անցյալը և դառնաղետ ներկան, ի հակակշիռ ողբերգական իրականության, հեղինակի միտումը դառնում է ժամանակակիցներին հորդորելն ու մխիթարելը, պայծառ գալիքի երազանքը:

[13] **Մովսես Խորենացի,** էջ 275:

Փիլիսոփայական լեզվով ասած, սա «եռամիասնության ավարտական փուլն է, որն իր հետ բերում է նոր սկզբի անհրաժեշտություն, նորի ծնվելու պահանջ:

Այնուամենայնիվ, ողբասացներին բնորոշ է հավատը ապագայի նկատմամբ: Պատմա-հայրենասիրական ողբերում դա արտահայտվում է հայրենիքը ազատ, անկախ, հզոր ու միասնական տեսնելու ցանկությամբ[14]:

Խորենացու «Հայոց պատմությունը» ավարտվում է հենց այսպիսի ողբալի իրավիճակի նկարագրությամբ. «Ողբում եմ քեզ Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ»[15]: Այնուհետև Խորենացին ցույց է տալիս այն համատարած անկումային տրամադրությունը, որ կլանել էր հայ հասարակության յուրաքանչյուր դասի մարդկանց. ուսուցիչները՝ տխմար, ինքնահավան, կրոնավորները՝ կեղծավոր, սնափառ, աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, զինվորականները անարի, իշխանները՝ ապստամբ, և առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած»[16]:

Նորպլատոնական փիլիսոփայության մեջ ևս պատմական «Ողբը» նշանակում էր մի ծանր պատմաշրջանի ավարտ ու նաև սկիզբ, դեպի նոր իրականություն, վերադարձ գոյերի միասնականություն, գոյության «եռյակի» նոր՝ առաջին փուլի սկզբնավորում: Քաղաքական անկումն առաջացրել էր վիատություն, միաժամանակ ձգտում՝ նոր անկախության ձեռքբերման:

Ողբալի վիճակի նկարագրությունը դարձել էր պարսից տիրապետության դեմ զինված ապստամբության նախապատրաստության հիմնավորման միջոց, ազգային անկախության և սեփական պետականության վերականգման պատմական քաղաքական և փիլիսոփայական հիմնավորման հայեցակարգ ու գաղափար:

Պետք էր այս գաղափարը զարգացնել, հուսադրել մարդկանց: Դրա համար հարկավոր էր անցյալից ստեղծել օրինակելի քաղաքական կերպարներ, սեր և հավատ սերմանել դեպի ազգն ու հայրենիքը, ստեղծել ազգային հավատ ներշնչող պատմություն, տիրապետող այն մտայնության մթնոլորտում, ըստ որի, ով պատմություն չունի՝ նա ազգ չէ: Դեռ IV դարից սկսած ժողո-

---

[14] http://hpj.asj-oa.am/1545/1/1970-3(270).pdf **Խաչատրյան Պ.Մ.,** Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Ե., 1969:

[15] **Մովսես Խորենացի,** էջ 313:

[16] Նույն տեղում, էջ 316:

վուրդների մեծ տեղաշարժերի[17] հետևանքով «Նախնական ազգերի» պատմություն ստեղծելը առաջնահերթ անհրաժեշտություն էր դարձել, քանի որ նոր հակամարտությունների պայմաններում պատմականորեն չձևավորված ու կայացած պատմություն չունեցող ժողովուրդները տեղ չունեին քաղաքակիրթ ժողովուրդների շարքում: Հայ իրականության մեջ Մովսես Խորենացու, որպես նորպլատոնականության փիլիսոփայության կրողի ու կերտողի բացառիկ դերը եղել է Հայաստանում անտիկ գիտության և հատկապես ազգային պատմագիտության հիմքերի ստեղծումը:

V դարում Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի աննախադեպ վերելքի մթնոլորտում ի հայտ եկավ նախընթաց հազարամյակի հերոսամարտերում ինքնահաստատված, սակայն արդեն վտանգված ժողովրդի վերածնունդն ապահովող ուղիների որոնման անհրաժեշտությունը: Այն առաջնային դարձավ հայոց պետականության կորստի հետևանքով ստեղծված ծանր կացությունից դուրս գալու պահանջով, ազգի վերնախավի՝ հայոց նախարարական ամենակենսունակ տների՝ Բագրատունիների և Մամիկոնյանների նախաձեռնությամբ և կյանքի կոչվեց Մեսրոպ Մաշտոցի ու նրա տաղանդավոր հետևորդների՝ հատկապես Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու ջանքերով: Ամենևին էլ պատահական չէր, որ Սահակ Բագրատունին և Վահան Մամիկոնյանը հանձնարարեցին ժամանակի ամենաաչքի ընկնող մտավորականներին՝ Մ. Խորենացուն և Ղ. Փարպեցուն պեղել-գտնել հայ ժողովրդի ծագման ակունքներն ու անցած հերոսական ճանապարհը, պարզել թե ո՞վ ենք մենք, ո՞րն է մեր լինելիության ու փրկության երաշխիքը: Նրանք ոչ միայն պատվիրել, այլև տվել էին գրվելիք գրքերի ծրագրերը և ուղենշել հետապնդած նպատակները: Իր մեկենաս Սահակ Բագրատունուն Խորենացին հաճախ է հիշում, անընդհատ խոսում ու խորհրդակցում նրա հետ, որից երևում է, որ Ս. Բագրատունու երեք պահանջներից առաջինը՝ «համառոտասիրությունն» է եղել, երկրորդը՝ «արագաբանությունը», երրորդը՝ «պերճ ու պայծառ, ինչպես պլատոնական խոսքերը, ստությունից հեռու և լի ճշմարտությամբ»[18]: Թեև պատմագիրը գտնում է, թե գործնականում հնարավոր չէ կարճ, արագ, և պլատոնական մակարդակով կատարյալ գրել, բայց շուտով խոստովանում է, որ «Պլատոնի խոսքը այժմ համարձակ կարտասանեմ, այն պատճառով, որ «Սիրողի (Պլատոնին – Մ.Դ.) համար կա՞ արդյոք ուրիշ ես, իհարկե ոչ»[19]:

[17] https://ru.wikipedia.org/wiki/Великое_переселение_народов

[18] Տե՛ս **Մովսես Խորենացի,** էջ 112:

[19] Նույն տեղում, էջ 114:

Ազգային ինքնության ակունքների որոնումները Խորենացուն հասցնում են մարդկության առաջացման առասպելական ակունքներին, համաշխարհային ջրհեղեղին ու Նոյ Նահապետի ժամանակներին: Հայ ժողովրդի կազմավորման ակունքներում Խորենացին դրել է նաև Բաբելոնյան աշտարակաշինության և Հայկի ու Բելի կռվի առասպելը: Տոհմացեղային լեզուների տրոհման և ազգային լեզուների ու ազգերի առաջացման պահից սկսած ձևավորվում է նաև հայոց ազգը և հայոց լեզուն, իսկ Հայաստանը նախնադարյան ցեղերի սովորական կայանատեղիից դառնում է կազմավորվող հայ ժողովրդի հայրենիքը:

«Խորենացին առաջինը եղավ,- գրում է Ս. Մալխասյանը,- որ գրեց հայ ազգի սիստեմական պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները: Սա մի ստեղծագործություն էր, «ի չգոյե գոյի ածել» էր մի ազգի անցյալը, սա մի ծննդյան վկայական էր մեր ազգի համար, որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ով է ինքը, և ինչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնավորությունը Ս. Գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում: Սերեցնելով հայերին աշտարակաշինության ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկա աղեղնավորին իբրև ազատության սիրահար և բռնակալ Բելին սպանող, նա փառավոր ու սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը»[20]:

Չգտնելով պատմական աղբյուրներ հայոց անցյալի մասին, Մ. Խորենացին հաճախ դիմում է ժողովրդական բանահյուսությանը և առասպելաբանությանը: Սակայն դրանցից օգտվում է որոշակի սկզբունքներով: Նա պաշտպանում է այն տեսակետը, թե աստվածները սկզբնապես եղել են մարդիկ և միայն մահից հետո աստվածացվել են, իսկ գերեզմանները դարձել են պաշտամունքի վայր: Խորենացին իր մեկնություններում առասպելը ներկայացնում է որպես բնական իրողություն, հավաստի դարձնում գերբնական ու վիպական դրսևորումները:

Ինչպես Պրոկլեսը «Նախասկզբից» ծնված անդամներին նույնացնում էր ժողովրդական կրոնների աստվածների հետ, այնպես էլ Խորենացին հայ հեթանոս աստվածներին համարում էր աշխարհը համակարգող հերոսներ: Դրա համար էր, որ Խորենացին ձգտում էր շունչ տալ ժողովրդական դիցաբանական հավատին և դրան տալ փիլիսոփայական հիմնավորում:

[20] **Մովսես Խորենացի,** էջ 33:

Խորենացին հելլենական քաղաքակրթության և նորպլատոնականության ուղղության նշանավոր ներկայացուցիչն էր Հայաստանում: Նրա նորպլատոնական աշխարհայացքը խորապես զգացված և անշեղորեն գործադրվող ուղղություն էր, մտավոր կարողություն և ոչ թե պարզունակ համակրանք: Հետևելով նորպլատոնականությանը, Խորենացին փորձ է անում միավորել բոլոր հին հավատալիքները: Գլխավոր շեշտը դնելով կիրառական միստիկայի վրա, համակարգում է անտիկ դիցաբանությունը, բացատրում մարգարեությունների ու հրաշագործությունների էությունը, վերզգայական աշխարհի բարձրունքը, նա հավատացած է թե հեթանոսական աստվածները սկզբնապես նշանավոր մարդիկ են եղել, որոնք հետո ժողովրդական ավանդույթների մեջ աստվածացվել են: Այս հայացքի հիման վրա Խորենացին նորից մարդ է դարձնում Բելին, Հայկին, Շամիրամին, Արային, Վահագնին, որոնք բաբելական և հայ ազգի աստվածություններն էին[21]: Խորենացին բերելով Վահագնի մասին առասպելը նորպլատոնականության մեթոդով՝ ավելացնում է. բայց ասում են նաև, թե սա աստվածացած է[22]: Նույն մեթոդով է Խորենացին բացատրել ժողովրդական բանահյուսության նյութերը: Նա Բելին նույնացրել է Սուրբ գրքի Նեբրովթի հետ: Ժողովրդական բանահյուսության համար Խորենացին կիրառել է նաև այլաբանական բացատրությունը: Նրա կարծիքով, ժողովրդական բանահյուսության երկերն առասպելներ են, իսկ առասպելները մեծ մասամբ այլաբանություններ են, ուստի պետք է մեկնել, այսինքն հայտնի դարձնել դրանց մեջ բովանդակած իսկությունը, ճշմարտությունը[23]:

Նույն սկզբունքով նա սովորական մարդիկ է դարձնում Տորք կամ Տուրք Անգեղին, Բյուրասպի Աժդահակին, Արտավազդին, որոնք առասպելական հերոսներ կամ ոգիներ էին[24]:

Խորենացին հայ առաջին պատմագիրն էր, որ գրեց իր ժողովրդի համակարգված պատմությունը անհիշելի ժամանակներից մինչև իր օրերը: Նա առաջինն էր, որ իր պատմական երկի հիմքում դրեց պատմափիլիսոփայական հստակ հայեցակարգ, որով դուրս եկավ սովորական պատմիչի մակարդակից և մտավ իմաստասիրության դաշտ: Խորենացու պատմափիլիսոփայությունը համեմատելի է նորպլատոնական հույն փիլիսոփա Պրոկլես Դիադոքոսի փիլիսոփայական հայացքների հետ, որի մշակած համակարգում հանդես է գա-

---

[21] Տե՛ս **Մովսես Խորենացի,** էջ 35:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 112:

[23] **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Գ, էջ 297:

[24] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Ե. 1942, էջ L:

լիս եռամիասնության (տրիադա) դիալեկտիկական զարգացման օրենքը: Այդ մեթոդի խորենացիական կիրառման դասական օրինակը հայոց պատմության պարբերացումն է, որտեղ տեղ է գտել ոչ թե փաստերի սովորական շարադրանքը, այլ մշակվել է պատմական գիտելիքի շարադրման, միասնական համակարգ, տրամաբանական ու փիլիսոփայական հստակ մեթոդ: Խորենացու այս պարբերացումը՝ նաև իր գիտականությամբ ու տրամաբանությամբ համապատասխանում է պրոկլեսյան դիալեկտիկական զարգացման եռյակի օրենքին:

Ուշագրավ է, որ թե՛ նորպլատոնական փիլիսոփայության մեջ, և թե՛ Խորենացու շարադրանքում «ողբի» թեման ի հայտ է գալիս մի ծանր պատմաշրջանի ավարտի և նորի սկզբնավորման սահմանագծում՝ գոյության եռյակի վերջում և նոր փուլի սկզբնավորման պահին, որպես ազգային քաղաքական անկախության և պետականության վերականգման պատմափիլիսոփայական հիմնավորում և հայեցակարգ:

Խորենացու նորպլատոնական աշխարհայացքը անշեղորեն դրսևորվեց նաև առասպելների ու հին հավատալիքների մեկնաբանության և գնահատման իր համատեքստում:

НЕОПЛАТОНИЧЕСКИЙ МЕТОД В ИСТОРИКО-ФИЛОСОФСКОЙ КОНЦЕПЦИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ

ДАВТЯН М.

Резюме

Ключевые слова: *Мовсес Хоренаци, «История Армении», Прокл Диадох, неоплатонизм, триада, скорбь.*

Мовсес Хоренаци был первым армянским историком, изложившим историю армянского народа с позиций собственной историко-философской концепции. Наше исследование показало, что философское осмысление истории Мовсесом Хоренаци сродни философским взглядам греческого философа неоплатоника Прокла Диадоха, разработавшего философскую систему, в основе которой лежит триада как закон диалектического развития. Классическим примером использования этого метода

Мовсесом Хоренаци является периодизация армянской истории, основанная не на изложении фактов, а на систематизации исторических знаний с помощью философско-логического метода. Подобная периодизация истории Мовсесом Хоренаци соответствует закону триады диалектического развития, разработанному Проклом Диадохом.

NEOPLATONIC METHOD OF HISTORICAL PHILOSOPHY BY MOVSES KHORENATSI

DAVTYAN M.

Summary

Key words: *Movses Khorenatsi, Armenian history, Procles Diadoccos, Neoplatonizm, Trinity, lamentation, Geneology of Armenia Major*.

Movses Khorenatsi was the first Armenian historian, that at the core of his historical work put forward a distinct conception due to which he excelled the ordinary historian's capacity and entered the philosophical field.

Our study showed, that Khorenatsi's philosophical interpretation of history is comparable to the philosophical views put forward by neoplatonic Greek philosopher Procles Diadoccos. The philosophical system elaborated by him consists in a triad dialectical development law. The vivid example of this method is reflected in the periodicization of Armenian history by Movses Khorenatsi which corresponds to Procles Diadoccos' triad dialectical development law .